ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/82

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2017թ. թիվ 03/26-3/22061-17 գրությամբ «Ոսկեհատշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի 29.11.2017թ. թիվ ՌԵԿ/241-17 գրության հիման վրա, 30.11.2017թ. թիվ 03/26-3/22061-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ոսկեհատշին» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Ոսկեհատշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ոսկեհատշին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 01.12.2017թ. գրությամբ հայտնել է, որ «Ոսկեհատշին» ՍՊԸ-ն ընդունում է իր մեղավորությունը 24.11.2017թ. «ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգից (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրաժարվելուց, քանի որ Ընկերության մոտ առկա էր համակարգչի ծրագրային խնդիր, որից ելնելով Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը եղել է շատ ցածր շին. աշխատանքները պատշաճ և որակով կատարելու համար:

«Ոսկեհատշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.12.2017թ. ժամը 10:40-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 29.11.2017թ. թիվ ՌԵԿ/241-17 գրությամբ հայտնել է, որ «ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2017թ. թիվ 2 նիստում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ոսկեհատշին» ՍՊԸ-ն, որը հրաժարվել է ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.12.2017թ. ժամը 10:40-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/82 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/82 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կողմից «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կարիքների համար շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Ոսկեհատշին» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Ոսկեհատշին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 24.11.2017թ. գրությամբ «Ոսկեհատշին» ՍՊԸ-ն հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված որոշմամբ «Ոսկեհատշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.11.2017թ. թիվ 03/26-3/22061-17 գրությունը, «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի 29.11.2017թ. թիվ ՌԵԿ/241-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կողմից «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կարիքների համար շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված

«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ մասնակցելու նպատակով «Ոսկեհատշին» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Ոսկեհատշին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Ոսկեհատշին» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 24.11.2017թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում ընդգրկված է միայն Ծավալաթերթ N 1-1 «Երկրորդ մասնաշենքի չորրորդ հարկի միջանցքի վերանորոգման աշխատանքների»-ի արժեքը:

Ընկերությունը հայտնել է, որ գնային առաջարկից համակարգչի ծրագրային խնդիրների ծագման պատճառով դուրս են մնացել՝

- Ծավալաթերթ N 1-2 «Երկրորդ մասնաշենքի չորրորդ հարկի N 404 լսարանի վերանորոգման աշխատանքներ»-ի
- Ծավալաթերթ N 1-3 «Երկրորդ մասնաշենքի չորրորդ հարկի N 407 լսարանի վերանորոգման աշխատանքներ»-ի
- Ծավալաթերթ N 1-4 «Երկրորդ մասնաշենքի չորրորդ հարկի N 414 լսարանի վերանորոգման աշխատանքներ»-ի արժեքները, ուստի իրականում հնարավոր չէ նշված բոլոր ծավալաթերթերի աշխատանքները իրականացնել Ընկերության կողմից սահմանված գնային առաջարկով:

Ելնելով վերոգրյալից՝ «Ոսկեհատշին» ՍՊԸ-ն հրաժարվել է «ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:***

Այսպիսով՝ Խորհուրդը գտնում է, որ «Ոսկեհատշին» ՍՊԸ-ն «ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-17/26» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի

6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ Ընթացակարգի հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2017թ. թիվ 03/26-3/22061-17 գրությամբ «Ոսկեհատշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04424782) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Ոսկեհատշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**